




Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԵԼԻՐԱ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ

(ՄԱՆԴՅԱՆ 1600-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)



Եր ամսագրի առյն ճամարք
սկզբում երապարակվում է Վե-
հափառ Հայրապետի օգտառու 25
թվակիր Մարտառ կնճակը Ս.

Մելիրա Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի
առթիվ:

«ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՐ ԱՅՍ ԿՈՆԴԱԿՈՎ, —
գրում է Վեհափառ Հայրապետը ներքընշ-
ման ոգով լի իր կնճակում, — ԿՀՐԱԾԱՆ-
ԳԵՆՔ ՄԵՐ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՈՒԻՆ,
ՔԵՄԱԿԱԼ ԱՐԱԶՆՈՐԴՆԵՐՈՒԻՆ, ԱԶԳԱՅԻՆ-
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽԵԽԱՆՈՒԹՅԱՆՑ, ՎԱՐԺԱ-
ՐԱՆՆԵՐՈՒ ՏՆՈՐԵՆՈՒԹՅԱՆՑ, ՀԱԿՈՒԹՅԱՐ-
ՉՈՒԹՅԱՆՑ, ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻՆ ԵՎ ՀԱՅ ՄՇԱ-
ԿՈՒՅԹԻ ՔՈԼՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆՑ՝ ՀԱՄԱԶ-
ԳԱՅԻՆ ՀՅԱՆԴԻՍՈՒԹՅԱՄՐ ՏՈՆԵԼ, ՊԱՆՍԱՅ-
ՆԵԼ ՍՈՒՐԵ ՀԻՇԱՏԱԿԲ ՄԵՄՐՈՊ ՄԱՇՏՈՑ
ՎԱՐԴԱՊԵՏԻՆ, ԱՆՈՐ ՄԱՆԴՅԱՆ 1600-ԱՄ-
ՅԱԿԻ ԱՌԹԻՎ, ՀՈԿՏԵՄՐԵՐ 14-ԻՆ, ԹԱՐԳ-
ՄԱՆԻԶ ՎԱՐԴԱՊԵՏՏԵՐՈՒ ՏՈՆԻՆ»:

1912 թվականին, նոգելոյս Տ. Գեղրդ և
Կարողիկոս Սուրենյանցի հայրապետական
կարգադրույթյամբ, մեծվայելով հանդիսու-
րյամբ ամենուրեք տոնվեց «Հայ տառերի
զյուտի հազար հինգ հարյուր և հայ տպա-
գրության չորս հայրապետամյակը» (412—
1512—1912):

Խոսանզի Տ. Խորեն Կարողիկոսը 1934
թվականին իր նոկտեմբեր 1 թվակիր Մարտ-
առ կնճակով երապարակել էր մի ամ-
բողջ տարի՝ 1934 նոկտեմբերից 1935 նոկ-

տեմբեր, համարել նորելանական տարի
և համազգային մեծաշուր հանդեսներով առ-
ել «հազար հինգ հարյութամեայ տարեդարձ
ուկեղէն բարգմանուրեան Ս. Գրոց ի հայ լե-
զու», 434—1934, միաժամանակ «արծար-
ծելով գերախտագիտական զգացումն և զսէր
առ մեծ երախտաւրու Ազգին, առ երա-
նելի դաս ասեմ Մարտ բարգմանշաց, գրի-
խաւրուրեամբ Մարտոց Սահակյ Պարբեկի
և Մելիրա Մաշտոցի»:

Քիչ բան զիտենք Ս. Մելիրա Մաշտոցի
կյանքի և կենսագրության մասին: Մեզ ամ-
փոփ տեղեկություններ են հաղորդել Ե դարի
մեր մատենագիրները՝ Կորյունը, Մովսես Խո-
րենացին և Ղազար Փարվեցին: Մեր պատմիշ-
ները տարված, հափշտակված և սփանչացա-
ս. Մելիրա ԳՈՐԾՈՎ, մոռացության են
տվել Երա ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: Կորյունը,
Խորենացին, Փարվեցին և հետագայում այլ
կենսագիրներ Փարվ Կորյունը, Մելիրա Երե-
ցը, Կարապետ Սահեցին և ուրիշներ ավելի
շատ խոսել են Ս. Մելիրա ԳՈՐԾՈՎ բան ԱՆ-
ՁՆ Մասին:

Եվ երբեք պատահականուրյուն չէր այն,
որ շատ սերնդների համար Ս. Մելիրա պի-
մեծ գործը՝ հայ գրերի զյուտը երաշալի պատ-
մունակով է ներկայացված: Կորյուն, Ս. Մել-
իրապի աշակերտը և Երա առաջին կենսագիրը,
որը գրել է Մեծ Վարդապետի «Վարք»-ը,
տարված Ս. Մաշտոցի մեծ գործով, մռա-
ցության է տվել Երա ՄԵՌ ԵՎ ՈՒՍԱՆԵԼԻ

ԿՅԱՆՔԸ, մանավանդ առաջին տարիների կյանքը, և սբանչացումով գրել է գրերի գուտայի և Աստուածաշնչի հայերեն բարգմանութվան հոյակապ «դեպք»—ի մասին, թե «ԵՐԲ ԵԼ ՅՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԻ ԵԼ ՈՐՊԻՍԻ ԱՐԱՄԹ» կատարվեց այդ հրաշք-երեսույթը մեր մշակույթի պատմության մեջ:

Կորյունը, Խորենացին, Փարզեցին և մյուս կենսագիրները նկարագրում են հրաշալի դեպքը ոչ թե «ԵՐԱՄԹԱՆՍ ԳՈՎՈՒԹԵԱՆ ԱՆՁԱՆՑ», այլ «ՆԱԽԱՆՁԱՆՈՐ ԼԻՆԵԼՈՎ ՀՈԳԵՒՐՈՒՄՑՆ», որպեսզի «ՀԱՅԵՑԵԱԼՔ ՅԵԼՍ ԳԱՆՁԻՑ ՆՈՑԱ, ՆՄԱՆԵԱԼՔ ԼԻՑՈՒՔ ՀԱԽ-ՏՈՑՆ»:

Կորյունը Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքի ընթացքը բաժանում է երկու շրջանի՝ աշխարհական և հոգևորական: Նա Ս. Մեսրոպի աշխարհական կյանքի մասին շատ քիչ բան է հաղորդում, որով, սակայն, բայց Մ. Աբեղյանի և Հ. Անայիանի, «Պարզվում է երա դեմքը», բայց ընդարձակ է գրում հոգևորական գործունեության մասին, որը տևել է 45 տարի՝ 395—440:

Ս. Մեսրոպ Մաշտոցը ծնվել է 361 թվականին Տարն գավառի Հացեկաց գյուղում, որը գտնվում է համբավակար Մշո դաշտում, Մուշ քաղաքից 40 կիլոմետր դեպի արևելք, Մեղրագետի աջ կողման տակ՝ Հ. Անայիան, «Մեսրոպ Մաշտոց», «Էջմիածին», 1954, № 11, էջ 22):

Մենուկ հավանարար Մամիկոնյան էր Ս. Մեսրոպ, որին՝ Վարդան անոնով բարեպաշտ մի մարդու: Նախանական կրթությունն ստանում է հոշակավոր Ս. Կարապետի վաճառում, ուր կրթվում է, բայց Կորյունի և Փարպեցու վկայության, նելլենական ուսմամբ. «Ի մամկութեան տիսն վարժեալ էր նելլենական դպրութեամբ»:

Այսուհետեւ նա տիրապետում է նաև պարսկերեն և ասուերեն լեզուներին, Տարանից անցնում է Վաղարշապատ, ուր խորանում է ուսման և գիտության մեջ, «ամեն պատրաստությամբ զարգարելով իրեն» (Կորյուն):

Վաղարշապատում Մեսրոպ Մաշտոցը մտնում է արքունի ծառայության մեջ, որպես կրթած և պատրաստված մեկը, «լինել սպասարք արքայատուր հրամանին» (Կորյուն), և կամ «ի դրան արքունի կարգեալ բարուդար» (Խորենացի), նաև Խորոնվ Գ-ի օրով. Առավան հազարավետի ձեռքի տակ, և ապա Վամիշապուի արքայի օրով:

Մեսրոպ Մաշտոցը ծանոթ էր նաև զինվորական արվեստին. «տեղեկացեալ և հմատ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն» (Կորյուն):

Փարպեցու վկայությամբ, Ս. Մեսրոպ հայոց արքունիքում արդյունավորությամբ և

բարեխնությամբ էր կատարում իր պալատական և զինվորական պարտականությունները, և սպասարկեալ անդ ամս կարգատրապէս առանց եղանակացնաց», սիրելի լինելով նաև իր ստորապատ զինվորներին:

Մեսրոպ արքունի պաշտոններում մնում է մոտ 10 տարի, 386—395 թվականներին:

Մեսրոպի հետագա կենսագիրներից մեկը, Կարապետ Սասնեցին, իր ներբողյանում Մեսրոպին ներկայացնում է որպես տիպար անձնավորություն, որը բեպեալ պարում էր արքունիքում, բազմապիսի աշխարհիկ պականությանց և գայլակղությանց մեջ, բայց բոլորովին նեռու էր այդ որոգայրեներից, մասուր էր և իր պաշտոնը ի գործ էր գնում խենիների և գրկալների պաշտպանության համար, կրոնաշոնչ գրերի ընթեցանության մեջ որոնում էր, բայց Կորյունի վկայության, «իր երկնակաց հոգու հագուրդը և վշտանար սրտի սփառականը աշխարհին ցավերի և վշտերի մեջ» (Հ. Անայիան, «Մեսրոպ Մաշտոց», «Էջմիածին», 1954, № 11, էջ 28): Իսկ մի օր, հավատով և սիրով հանում է իր զինվորական փայլուն համազգեստը, առնում իր խաչը, գնում է ԶԱՅՆԻ հետևից, որ իրեն կանչում էր հավերժական առաքելության, հաշածարկում աշխարհիկ հաջողություններից, կնքուղ է հագնում և դառնում կահական. «բայց ամեռարանական շափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ մերկանայց այնուհետեւ զիշխանակից ցանկութիւնն և առեալ զիաշն պարծանաց, ելաներ զինի ամենակեցոյց խաչելոյն» (Կորյուն):

Ս. Մեսրոպ Մաշտոցը 394 թվականին բռնում է զինվորական ծառայությունը և 395 թվականին, Ս. Սահակ Պարքե Հայրապետի համաձայնությամբ, դառնում է վահական և ուղարկվում Գողբենցաց աշխարհի որպես բարողի: Այսուղ նա հավաքում է բազմաթիվ աշակերտներ և գրադիւն «առաքելական» գործունեությամբ. «գերենով ամենքին հայրենական պահերություններից և սատանայական դիվապաշտ ծառայությունից» (Կորյուն):

Գողբն գավառում Ս. Մեսրոպ Մաշտոցի հոգում ծագում է պայծառ միտք, իրկարաց լույս: Նա մտածում է ամբողջ հայ ծողովրդի հոգեռու, իմացական լուսավորության մասին: Նա խորապես զգում է անհրաժեշտությունը հայ գրի ու գարության: Ս. Մեսրոպի հայրենական արվեստ և ծողովրդասեր պիրար կարեվեր վառվում էր հայ ծողովրդի տիսուր կյանքով և անստույգ պապայի մտահղություններով. «Տամություն է ինձ համար և անդական են իմ սրան գավերն իմ եղբայրերի և ազգայինների համար»:

Մեծ տեսանողը, «անկեալ ի ծուփս խորհրդոց», զիշեր և ցերեկ, անդադրում և անձանձույց, մտածում էր արմատական միջոցի, փրկության միակ ելքի մասին: Դա սեփական զիր և գրականուրյուն ունենալու պահանջն էր:

Ս. Մեսրոպ Մաշտոցը, զգալով գործի համազգային պատմական նշանակությունը և որև նես կապված բազմարիլ դժվարությունները, Գողրճնաց աշխարհում երկար ժամանակ այդ հարցով զբաղվելուց հետո, 402 բվականին վեշափառում էր Վաղարշապատ և հարց էր բարձրացնում Ս. Սահակ Հայրապետի առաջ: Ս. Սահակ հայրապետը, նոյնպես մտագրադ նման հարցերով, ջերմուեն ընդունում էր Ա. Մեսրոպի առաջարկը, այն համարելով նույն իր սրբին շատ մոտ, անհետածգելի հարց:

403 բվականին, Վաղարշապատում գրւմարդում է խորերդակցական մի ժողով, որին ներկա են լինում բարձրաստիճան հոգևորականներ և զիտանականներ:

Կարողիկոսի նախագահությամբ կազմված ժողովին մասնակցում է նաև Վահանշապոս արքան, ի սպաս զնելով արքունիքի գանձերը, Ս. Մեսրոպ Մաշտոցի գործի հաջողության համար:

Վաղարշապատի համագումարը միաձառնում է Մեսրոպ վարդապետին հանձնել այդ գործը:

404—405 բվականներին, Մեսրոպ Մաշտոցը, մի խումբ աշակերտներով, մեկնում է Միջազգետք, Ամիդ, Եղեսիր, Սամսուտ: Ոչ մի տեղ սակայն երան ունէ լուրջ օգնություն չեն կարողանում տալ, բացի սիրայիր բնդունուրուններից և ոչազդությունից: Այնուամենայնիվ, Ս. Մեսրոպը, իր շշագայության ընթացքում, ձեռք է բերամ որպէս հրմտուրյուն և ծանոթուրյուն:

Բայց նա իր սրբազնության նվիրական նպատակի հասնում է ՄիԱՅՆ եկ ՄԻԱՅՆ ԻՐ ՀԱՍՏԱՐ, ՏՔՆԱԾԱՆ եկ ՍՏԵՂԾԱԳՈՐԾ ԱՇԽԱՏԱՎԻ ՇՆՈՐՇԻՎ:

405—406 բվականներին, ի վերջո, հաջողությամբ են պատկում Ս. Մեսրոպի տեխնուրյունները: Մի խոստումնայից և պայծառությունից ինքնամփոփման, խոկսան և աղորդի պահուն, «ոչ ի հուն երազ և ոչ յարբուրեան տեսիլ» վիճակում, եղեսայում, ստեղծագործական երկումքի մեջ, նա հնարում է հայկական ճշանագերերը: «Եւ այնպէս բազում աշխատութեան համբերեալ, ՎԱՍԻ ԻՒՐՈՅ ԱԶԴԻՆ, ԲՄՐԵԱՑ», ծնունդ է տալիս նայ տառերին: «Են իր սուրբ Աշովլ, —գրում է Կորյունը, — հայրաբար նորինեց նոր և սիմաշելի ծնունդներ՝ հայերեն լեզվի նշանագեր»:

Գրերի ստեղծումից հետո, Ս. Մեսրոպ Մաշտոցը երանց յուրաքանչյուրին տալիս է

առանձին ձեւ, որոշում անունները, և որոշ դասավորությամբ շարում, կազմելով մեր այսօրվա այրութեանը: Այսումեալ նա անցնում է Սամսուտ, Միջազգետքի հյուսիսում գրանցվող և հելլենիստական մշակույթի կենտրոն համարվող այդ հաղաքը, հունական դպրության հմուտ գրի Հոռովանոսի մոտ, իր ստեղծած հայ տառերին տեխնիկական վերջին ձևավորումը տալու համար: Հոռովանոսը վերցնում է Մեսրոպյան նշանագերի պարզ սկագրումը և մազաղարյա բղրի ու մամի տախտակների վրա նկարում է մի վայելու պեսակիտ, «տառերի կարերի կարն, երկար՝ երկար պահելով և հաւր ու հասա գծերը գեղեցիկ նկարելով» (Կորյուն):

Ծուրչ 1550 տարի է անցել այն օրվանից, երբ Ս. Մեսրոպը ստեղծեց հայ նշանագերերը: Բայց հայկական այրութեանը մինչև այսօր է մնացել է անփոփոխ:

Այսումեալ Սամսուտից Ս. Մեսրոպը վերադառնում է «հոգելից ուրախութեամբ ի Հայաստան աշխարհ, ի կողման Այրատեան զաւարին, առ սահմանօք նոր Քաղաքին» (Կորյուն), այն է՝ հայրապետական և քագակառական վաղարշապատ մայրաքաղաքը:

Ս. Մեսրոպ կաղարշապատում ընդունվում է ժողովրդի «ցնծորեան բարբառ և երգօք հոգելորօք» (Կորյուն):

Ղազար Փարավեցին նկարագրում է հոգելոր ուրախությունն ու խանդավառությունը ամրագ ժողովրդի, հոգելորականության ու արքունիքի. ամեն ու «փափաքէր յատում զիտուրեան, որպէս ի խաւարէն յատու տանշանացն զերծեալիք ի լոյս խնդային»:

Կորյունը, դեպքին ականատես, Ս. Մեսրոպի Հայաստան զարուար, ձեռքում հայկական նշանագերեր, հմանեցնում է շատ դիպուկ կերպով, Սովոս մարգարեի Սինայից էջմիածին, Տամարանյա աստվածատուր պատվիրանները ձեռքին: «Օրինութեամբ ի բաղադրին [քագաւարական] դասնային և զատու տօնական ուրախութեամբ անցուանէին»:

Գրերի գյուտը համազգային ցնծատոն էր բրկանակ հայ ժողովրդի համար:

Կորյունը, արտահայտեալ բավանդակ հայ ժողովրդի «Կրտալիր ուրախութին»-ը, գրերի գյուտի բերկանիր դեպքի և նշանագության մասին արդարուեն գրում է հետեւյալը: «Յայնմ ժամանակի երանելի և ցանկալի աշխատն Հայոց անպայման սբանչելի լինելը», որովեալ, գրերի գյուտով և Աստվածաշրեշտի հայերեն բարգամանությամբ, մեր Երեսում «ԱՍՏԱԽԱՍԿԱԼՈՒՄ ՍՔԱՆԳԾԱԿԱԼՈՒՄ ԹԻՒՆՔ ԳՈՐԾԵՑԱՆ», և նայ ժողովարդը, գրերի գյուտի խորերդով, «առ ժաման վաղակի ամենայն իրաց եղելոց խելամուտ լինել» (Կորյուն):

Ժ դարի պատմիշ Ասողիկը ավելացնում է. «Սկիզբն դպրութեան Հայոց եղեւ սկիզբն մեծի գիտութեան և աճապայման ուրախութեան» («Պատմութիւն տիեզերական, Ս. Պետքրուրգ, 1880, էջ 74):

Միջնադարյան մի անհուն գրիչ ասում է, որ գրերի գյուտով «քազվեց հայի կապված բերանը, փարատվեց մեզը և հոգեոր ստիճանը իր կարք ջամբեց»:

Գրերի գյուտով հայ ժողովութղր գտավ իր զոյուրյան և հավերժության կովանը և դարերի դիմաց փառեց իր կյանքի անշեշ խարույկը:

Գրերի գյուտից հետո, մեր պատմության վրայով անցան արյան ամենի մերիկներ, մեր ժողովութղր փշուր-փշուր եղավ աստղերի հման և ցրվեց աշխարհում «օրէն մոլորական աստեղաց»:

ՄեսրոպՅԱՆ ՆԵԱՆԱԳՐԵՐԸ ՄԵԶ ՓՐԿԵՑԻՆ ՀՊԳԵԿԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ, ՊԱՅՄԱՆԱՅԲՐԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒՆ, ԿԵՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐ ԼԻՑՔ ՀԱՂՈՐԴԵՑԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՅՑԻՆ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԲՈԼՈՐՈՎ ՀԱՅ ՀՈԴԻՆ ՈՒ ՄԻՏՔԸ ԶՐԱՆԵՑԻՆ ԳԱԼԻՔ ԲՈԼՈՐ ԶՐԾԵԴԵՂՆԵՐԻ ԴԵՄ, ԼՈՒՄԱՎՈՐ ԵՎ ՓՐԿԱՐՈՐ ՃԱՆԱԳՐԱՐԸ ՀԱՐԹԵԼՈՎ ԴԵՊԻ ՊԱՅՄԱՆԱՅԲ:

Երբ, Ազգիս Վեհափառ Հայրապետի նրամանով, ոգեկոչում ենք նիշատակը Օշականի Մեծ Մրիի, Խորին Ս. Օծուրյունը, իր սրատառ կոնդակով, մի քաղցր և սրբազն պարտականություն է դնում յուրաքանչյուր

հայ մարդու վրա, այն է՝ աշխի լուսի պիտի պահել հայոց մեծասիանց լեզուն մեր եկեղեցիներում, մեր դպրոցներում, մեր ընտանիքներում, ապրեցնել ամեն տեղ մեր շրբների վրա, սիրել և տարածել հայ գիրն ու գրականությունը, դաստիարակել հայ նոր սերնդին Մեսրոպյան նշանագրերի լույսով և խորհրդով, պայմանական լեզվի աղավաղումների և աղճատումների դեմ:

Տարեդարձներն ու հորելյանական հանդիսուրյունները ավելորդ կլինեին, երես արդարութաբենայինք բափանցել տոնի խորհրդին և իմաստին և չկարենեայինք բաղել մեզ համար աներածեշտ դասերը, թե՛ իբր անհատ և թե՛ իբր հավականություն:

«ՀԱՅ ՀԱՅԱՍՔԻ ՎԵՄ Ս. ԷջՄԻԱԾՆԵՆ, — գում է Վեհափառ Հայրապետը իր օգոստոս 25 րիվակիր սրբատառ կոնդակում, — եվ ԵՐԱՆԻՏԱԳԵՏ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐՈՒՄԻ ՄՐՏԵՆ՝ ՀԱՐԴԱՐԱՆՔ ԵՎ ՓՈՂՈՒՔ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԻՆ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ Ս. ՄԵՍՐՈՊԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ԵՎ ԱՆՈՐ ԱՆՄԱՀ ԳՈՐԾԻՆ»:

Զի մենել Օշականի Մեծ Սուրբը: Նա, իր նշանագրերի խորհրդով, առաջնորդում և ղեկավարում է մեզ:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, Ս. Մեսրոպի ծննդյան 1600-ամյակի առքիվ, տալիս է իր զավակներին իր իշավ, մեսրոպարույր պատգամը.

«ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐՈՒՄ, ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻ ԵՎ ՄԻՇՏ ՓՈՂՈՒՔԻ ՄԵԶ ՊԱՀԵ ՔՈՒ ՄԵՏԱԳՐԱՆՉԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆԻ ԵՎ ԳԻՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ»:

